

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 նոյեմբերի 2005 թվականի N 1929-Ն

**ՄԻՆԶԵՎ 180 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»
ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԴՐԱՆՑ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների վերադարձման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2005 թ. նոյեմբերի 18
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՄԻՆԶԵՎ 180 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»
ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԴՐԱՆՑ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում են մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի, բնապահպանական և ճանապարհային վճարների) վերադարձման կարգն ու ժամկետները:

2. Սույն կարգի իմաստով «վերադարձ» է համարվում վերադարձման ենթակա գումարները կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ հանդիսացող մաքսային վճար վճարողի մաքսային կամ հարկային վճարների գծով առկա պարտավորությունների հաշվին հաշվանցելը և (կամ) մաքսային վճար վճարողի բանկային հաշվին փոխանցելը և (կամ) բանկային համակարգի միջոցով կանխիկ տրամադրելը:

3. Սույն կարգով սահմանված վերադարձման ենթակա գումարները վերադարձվում են մաքսային վճարների վերադարձման մասին «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով լրացված մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմին (մաքսատուն, մաքսային կետ) ներկայացված դիմումի՝ համաձայն N 1 ձևի, հիման վրա՝ դիմումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

4. *(4-րդ կետն ուժը կորցրել է 05.04.12 N 404-Ն)*

5. *(5-րդ կետն ուժը կորցրել է 05.04.12 N 404-Ն)*

6. «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմինը, դիմումի հիման վրա, դիմումն ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ապրանքների ներմուծմանը և վերաարտահանմանը վերաբերվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում առկա փաստաթղթերը, կազմում դրանք և վերադաս մաքսային մարմին է ներկայացնում նախկինում վճարված մաքսային վճարների գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վերադարձնելու մասին եզրակացությունները՝ համաձայն NN 2, 3 և 4 ձևերի, և սույն կարգի 3-րդ կետում նշված դիմումը: Ընդ որում, «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմինը կազմում և վերադաս մաքսային մարմին է ներկայացնում՝

ա) մաքսային վճարների գծով պարտավորությունների առկայության դեպքում՝ եզրակացություն (N 2 ձև).

բ) մաքսային վճարների գծով պարտավորությունների բացակայության կամ պարտավորությունների մարման արդյունքում դրական տարբերության առաջացման դեպքում՝ դիմումում նշված՝ հարկային մարմինների միջոցով պետական բյուջե հավաքագրվող, հարկային և այլ պարտավորությունների մարմանն ուղղվելու դեպքում՝ եզրակացություն (N 3 ձև).

գ) մաքսային ու հարկային վճարների գծով պարտավորությունների բացակայության և մաքսային վճարների գծով պարտավորությունների մարման արդյունքում առաջացած դրական տարբերությունը վերադարձնելու դեպքում՝ եզրակացություն (N 4 ձև):

(6-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն, փոփ., խմբ. 05.04.12 N 404-Ն)

7. վերադաս մաքսային մարմինը «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնից սույն կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում ուսումնասիրում և հաշվառում է փաստաթղթերը, որից հետո մաքսային վճարների վերադարձը մերժելու հիմքերի բացակայության դեպքում՝

ա) «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնի կողմից եզրակացություն (N 2 ձև) ներկայացնելու դեպքում՝ համապատասխան մաքսային մարմնին թույլատրում է կատարել հաշվանցումներ.

բ) «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնի կողմից եզրակացություններ (NN 3 և (կամ) 4 ձևեր) ներկայացվելու դեպքում՝ եզրակացությունը, իսկ մեկից ավելի եզրակացությունների դեպքում՝ եզրակացությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքն ուղարկում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

(7-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն, 05.04.12 N 404-Ն)

8. վերադաս մաքսային մարմինը մաքսային վճարների վերադարձը մերժելու հիմքերի առկայության դեպքում՝ 3-օրյա ժամկետում սույն կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերը վերադարձնում է մաքսատուն կամ մաքսային կետ՝ անհրաժեշտ հիմնավորումներ ներկայացնելու համար:

(8-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն)

9. Մաքսային վճարների վերադարձը մերժվում է, եթե դիմումով պահանջված գումարը Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի համաձայն ենթակա չէ վերադարձման:

(9-րդ կետը խմբ. 05.04.12 N 404-Ն)

10. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ստանալով եզրակացությունները (N 2 և (կամ) N 3 ձևեր) կամ կատարված հաշվանցումների կամ վերադարձների մասին ամփոփ տեղեկանքները (N 5 և (կամ) N 6 ձևեր), սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամկետում գումարների վերադարձն իրականացնելու համար՝

1) կատարում է հաշվանցում N 3 ձևի եզրակացությանը համապատասխան և (կամ)՝

2) կատարում է փոխանցում՝ N 4 ձևի եզրակացությանը համապատասխան:

(10-րդ կետը խմբ. 05.04.12 N 404-Ն)

11. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով հաշվանցումներ և (կամ) փոխանցում կատարելուց հետո 5-օրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում է վերադաս մաքսային մարմնին և հարկային մարմնին:

(11-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն, 05.04.12 N 404-Ն)

12. վերադաս մաքսային մարմինը և հարկային մարմինը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից գրավոր տեղեկացվելուց հետո համապատասխան բյուջետային հաշվի քաղվածքների հիման վրա հարկ վճարողների անձնական հաշվի քարտերում (վճարումների հաշվառման քարտում) ոչ ուշ, քան քաղվածքը կամ դրանք փոխարինող այլ փաստաթուղթ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը կատարում են համապատասխան վերջնական ձևակերպումներ և կատարված հաշվանցման մասին գրավոր տեղեկացնում են դիմողին:

(12-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն, 05.04.12 N 404-Ն)

13. Սույն կարգի 7-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմինը համապատասխան հաշվանցումներ կատարելուց հետո կատարված հաշվանցման մասին գրավոր տեղեկացնում է դիմողին և վերադաս մաքսային մարմնին:

(13-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն)

14. *(14-րդ կետն ուժը կորցրել է 05.04.12 N 404-Ն)*

(Կարգը փոփ. 22.01.09 N 78-Ն, փոփ., խմբ. 05.04.12 N 404-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Ձև N 1

մաքսատուն (մաքսային կետ)

(մաքսատան (մաքսային կետի) անվանումը)

Դ Ի Մ ՈՒ Մ

«ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը	
2. Գտնվելու վայրը (ֆիզիկական անձի բնակության վայրը)	
3. Հարկ վճարողի հաշվառման համարը	
4. Ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը	

5. Խնդրում եմ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վերադարձնել մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների վերաարտահանման հետևյալ գործարքների մասով օրենքով սահմանված մաքսային վճարները՝ հետևյալ գումարներով՝

«Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մաքսային հայտարարագրի		«Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների մաքսային հայտարարագրի		Վերադարձման ենթակա գումարը (դրամ)
համարը	ամիսը, ամսաթիվը	համարը	օրը, ամիսը, ամսաթիվը	
Ընդամենը				

6. Խնդրում եմ վերադարձման ենթակա գումարի հաշվին՝

1) մարել մաքսային վճարների մասով հետևյալ պարտավորությունները		
մաքսային պարտավորության անվանումը		մարման ենթակա գումարը (դրամ)
Ընդամենը		
2) ուղղել հարկային մարմին կողմից հաշվառվող հետևյալ պարտավորությունների հաշվանցմանը		
հարկային կամ պարտադիր այլ վճարների մասով պարտավորության անվանումը		մարման ենթակա գումարը (դրամ)
Ընդամենը		
3) վերադարձնել հետևյալ բանկային հաշվին՝		
բանկի անվանումը	բանկային հաշվի համարը	գումարը (դրամ)

Ընդամենը		

7. Տեղեկացնում եմ, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան «Վերաարտահանման» գործարքների մասով ԱԱՀ-ի հաշվարկով կատարվել է հաշվանցվող ԱԱՀ-ի գումարների պակասեցում:

_____ 20 ____ թ.
(ղիմուրը ներկայացնելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

Կազմակերպության տնօրեն (ֆիզիկական անձ)

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Հաշվապահ

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

(Ձևը խմբ. 05.04.12 N 404-Ն)

Ձև N 2

_____ մաքսատուն (մաքսային կետ)
(մաքսատան (մաքսային կետի) անվանումը)

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N.....

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսային վճար վճարողի _____ 20 ____ թ. ղիմումի համաձայն

_____ ՀՎՀՀ-ն կամ սոցիալական քարտի համարը

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

_____ 20 ____ թ. դրությամբ առկա

_____ դրամ

(մաքսային վճարների գումարը՝ թվերով և տառերով)

ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

_____ հաշվից:

(հաշվի համարը)

Վերադարձման ենթակա գումարը մաքսային մարմիններում հաշվառված պարտավորությունների հաշվին ենթակա է հաշվանցման՝

Հարկի կամ այլ պարտադիր վճարի անվանումը	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշիվը	Ամբողջ գումարը (ներառյալ հաշվարկված տույժերը) (դրամ)
Մաքսատուրք		
Ավելացված արժեքի հարկ		

Ակցիզային հարկ		
Հաստատագրված վճար		
Այլ մաքսային վճարներ, այդ թվում՝		
Մաքսավճար		
Բնապահպանական վճար		
Ճանապարհային վճար		
Ընդամենը		

_____ պետ (մաքսատան (մաքսային կետի) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ 20 թ.
(Ձևը խմբ. 05.04.12 N 404- Ն)

Ձև N 3

_____ մաքսատուն (մաքսային կետ)
(մաքսատան (մաքսային կետի) անվանումը)

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N.....

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսային վճար վճարողի _____ 20 _____ թ. դիմումի համաձայն

_____ ՀՎՀՀ-ն կամ սոցիալական քարտի համարը
(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

_____ 20 թ. դրությամբ առկա

_____ դրամ
(մաքսային վճարների գումարը՝ թվերով և տառերով)

ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

_____ հաշվից:
(հաշվի համարը)

Վերադարձման ենթակա գումարը հարկային վճարների գծով հաշվառված պարտավորությունների հաշվին ենթակա է հաշվանցման

_____ (հարկային տեսչության անվանումը)

հարկային տեսչության հաշվին:

Հարկի կամ այլ պարտադիր վճարի անվանումը	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշիվը	Ամբողջ գումարը (ներառյալ հաշվարկված տույժերը) (դրամ)

Ընդամենը		

_____ պետ
մաքսատան (մաքսային կետի) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ 20 թ.
(Ձեր խմբ. 05.04.12 N 404- Ն)

Ձև N 4

_____ մաքսատուն (մաքսային կետ)
(մաքսատան (մաքսային կետի) անվանումը)

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N.....

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մաքսային վճար վճարողի _____ 20 _____ թ. դիմումի համաձայն
 _____ ՀՎՀՀ-ն կամ սոցիալական քարտի համարը
(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

_____ 20 թ. դրությամբ առկա _____ դրամ
(մաքսային վճարների գումարը՝ թվերով և տառերով)

ենթակա է հաշվանցման և (կամ) վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

_____ հաշվից:
(հաշվի համարը)

Հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը հարկային վճարների գծով հաշվառված պարտավորությունների հաշվին կատարվել է հաշվանցում (վերադարձ)՝

- 1) ձև N2 եզրակացությամբ _____ դրամ գումարով.
(գումարը՝ թվերով)
- 2) ձև N3 եզրակացությամբ _____ դրամ գումարով:
(գումարը՝ թվերով)

Հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի և մաքսային ու հարկային պարտավորությունների մարման արդյունքում առաջացած դրական տարբերությունը կազմել է _____ դրամ,
(գումարը՝ թվերով և տառերով)

որը ենթակա է փոխանցման:

Հաշվարկային հաշվի համարը	Բանկի անվանումը	Գումարը
--------------------------	-----------------	---------

		(դրամ)
Ընդամենը		

_____ պետ
 մաքսատան (մաքսային կետի) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)
 _____ 20 թ.
 (Ձևը խմբ. 05.04.12 N 404-Ն)

Ձև N 5

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N _____

**ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ NN 2 ԵՎ 3
 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԴԱՐՁՆԵՐԻ
 (ՀԱՇՎԱՆՑՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ամփոփելով 20 թ. _____ -ի _____ -ից մինչև 20 թ. _____ -ի _____ -ը «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների մասով վերադարձման ենթակա գումարների հաշվանցման վերաբերյալ եզրակացությունները՝ տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետևյալ հաշիվներից նշված գումարները ենթակա են հաշվանցման՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետևյալ հաշիվներին.

NN ը/կ	Հաշիվը, որից հաշվանցվում է	Հաշիվը, որին հաշվեգրվում է	Գումարը (դրամ)
	Ընդամենը		

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ՝

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 _____ թ.

(Ձևը փոփ. 22.01.09 N 78-Ն, խմբ. 05.04.12 N 404-Ն)

Ձև N 6

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N _____

**ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ N 4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԴԱՐՁՆԵՐԻ)
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ամփոփելով 20 թ. _____ -ի _____ -ից մինչև 20 թ. _____ -ի _____ -ը «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների մասով վերադարձման ենթակա գումարների հաշվանցման վերաբերյալ եզրակացությունները՝ տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետևյալ հաշիվներից նշված գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողների հետևյալ հաշվարկային հաշիվներին.

NN ը/կ	Հաշիվը, որից կատարվում է վերադարձ	Հաշիվը, որին հաշվեգրվում է	Բանկի անվանումը	Հաշվարկային հաշվի համարը	Գումարը (դրամ)
	Ընդամենը				

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20____ թ.

(Ձևը փոփ. 22.01.09 N 78- Ն, խմբ. 05.04.12 N 404- Ն)